



**ՄԱՅՐ ԱԹՈՒ
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԷՆ**

**ԱՄԵՆԱՊԱՍԻԻ
ՏԵՐ ՆՈՒՐՎԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔ
Երուսաղէմ, Իսրայէլ**

Ամենապատիւ Պատրիարք,
Սուրբ Զատկի՝ մեր Տիրոջ Յիսուս
Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնի
առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում
ենք քրիստոնէական սիրոյ մեր ողջոյններն ու
շնորհատրանքները Ձեզ եւ Երուսաղէմի Սրբոց
Յակոբեանց միաբանութեանը:

Այսօր քրիստոնէայ աշխարհը փառա-
բանում է մարդկութեան համար խաչուած ու
յարութիւն առած Աստուածորդոյն ական-
ջալուր անտաբեր հրեշտակի պատգամին.
«Ձի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ,
այլ յարեալ» (Գուկ. 24; 5-6):

Յնծութեամբ լեցուն են մեր հոգիները եւ
բաջալեր, քանզի Փրկչի Սուրբ Յարութիւնը
կեանքի յաղթանակն է ընդդէմ մահուան, ան-
խախտ վէմն է քրիստոնէական մեր հաւատքի
եւ առանցքը մեր հոգեւոր առաքելութեան.
«Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է
քարոզութիւն մեր, ընդունայն են եւ հաւատք
ձեր» (Ա Կորնթ. 15; 14):

Ապաւինած Տիրոջ Յարութեան զօրու-
թեանը աշխարհասփիտ մեր ժողովրդի զաւակ-
ները դարերի մէջ յաղթահարեցին բազում
փորձութիւններ եւ, հաւատարիմ նախնեաց լոյս
հաւատքին, ապրեցին յարուցեալ կեանքի
յոյսով, բարին արարեցին ստեղծագործ ոգով,
ծաղկեցրին հայ մշակոյթը, գիրն ու գրակա-
նութիւնը, նուաճումներ արձանագրեցին
արուեստի ու գիտութեան մէջ մշտարթուն պա-
հելով ազգային-եկեղեցական իրենց կեանքը:

Մեծահրաշ այս տօնին Մեր մաղթանքն
է, որպէսզի մեր սուրբ հայրերի օրինակով

չընկրկենք դժուարութիւնների առջեւ, այլ Քրիս-
տոսի Յարութեան կենարար հաւատքով զօրա-
ցած դիմագրաւենք ժամանակի փորձու-
թիւններն ու մարտահրաւէրները, հոգեւոր ու
ազգային ինքնութեան մէջ ամուր պահենք
աշխարհասփիտ մեր համայնքները, միասնա-
կան ջանքերով շէնացնենք ու հզօրացնենք
ազատ մեր հայրենիքը:

Զատկական նուիրական այս առաւօտ
աղօթք ենք բարձրացնում առ Աստուած,
որպէսզի աշխարհում, ի մասնատրի, մեր հայ-
րենիքի սահմաններում եւ Մերձատր Արեւել-
քում դադարեն պատերազմները, վերահաս-
տատուեն բաղձալի խաղաղութիւնն ու ապա-
հով բնականոն կեանքը:

Թող Յարուցեալ Փրկչիչը հոգեմորոգ իր
շնորհներով անասան պահի մեր Սուրբ
Եկեղեցին եւ իր Երկնառաք շնորհների ներքոյ
պահպանի եկեղեցական դասը՝ մեր ժողովրդի
քրիստոնէական կեանքում առաւել արդիւ-
նատր ծառայութեամբ յարութեան շունչը վառ
ու կենդանի պահելու եւ շէնացնելու ազգային-
եկեղեցական մեր անդատամը:

Առ Ամենաբարին Աստուած աղօթքով
հայցում ենք, որ Տէրը զօրաւիզ լինի Ձեզ տէրու-
նապատուէր Ձեր առաքելութեան մէջ՝ շնոր-
հելով քաջառողջ եւ արեւշատ ծառայութեան
երկար տարիներ՝ ի պայծառութիւն Երուսաղէմի
Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Առա-
քելական մեր Սուրբ Եկեղեցու:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ,
ՕՐՎՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԔՐԻՍՏՈՍԻ**

Ողջունիլ ի Քրիստոս եւ օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

